ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 17.12.2003

- Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2.Այլընտրանքային ծառայության զորակոչ կազմակերպելը
- Գլուխ 3. Այլընտրանքային ծառայություն անցնելը
- Գլուխ 4. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ սահմանում է այլընտրանքային ծառայության զորակոչ կազմակերպելու եւ անցկացնելու կարգը:

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը

Այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, այլ օրենքներից եւ իրավական ակտերից:

Հոդված 2. Այլընտրանքային ծառայության հասկացությունը եւ տեսակները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունն ունի հետեւյալ իմաստները.

այլընտրանքային ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից իրականացվող հատուկ պետական ծառայություն, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու եւ օգտագործելու հետ ու բաղկացած է երկու տեսակից՝

1) այլընտրանքային զինվորական ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող հատուկ պետական ծառայության տեսակ.

2) այլընտրանքային աշխատանքային ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող հատուկ պետական ծառայության տեսակ:

Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի եւ հասարակության առջեւ քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է եւ չունի պատժի, անձի պատվի եւ արժանապատվության նվաստացման բնույթ:

Հոդված 3. Այլընտրանքային ծառայություն անցնելու հիմքը

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին իրավունք ունի անցնելու այլընտրանքային ծառայության, եթե նրա կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ռազմական ստորաբաժանումներում պարտադիր զինվորական ծառայություն անցնելը, ինչպես նաեւ զենք կրելը, պահելը, պահպանելը եւ օգտագործելը:

Հոդված 4. Այլընտրանքային ծառայության ուղարկվող քաղաքացին

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, ով մինչեւ հերթական զորակոչին նախորդող մարտի 1-ը կամ սեպտեմբերի 1-ը դիմել է իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի

հիմքով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հնարավորության բացակայության մասին, եւ ում նկատմամբ տեղական զորակոչային հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշում:

Սույն օրենքի դրույթները չեն տարածվում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման իրավունք ստանալու հիմք ունեցող քաղաքացիների վրա:

Հոդված 5. Այլընտրանքային ծառայության ժամկետը

Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 36 ամիս:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը սահմանվում է 42 ամիս:

ԳԼՈՒԽ 2.

ԱԼՅԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Հոդված 6. Այլընտրանքային ծառայության զորակոչը

Այլընտրանքային ծառայության զորակոչը եւ պահեստ արձակումը կատարվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի եւ պահեստ արձակելու հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում:

Այլընտրանքային ծառայության համար դիմած քաղաքացին, այլընտրանքային ծառայության զորակոչ հայտարարվելուց հետո, պարտավոր է ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ:

Այլընտրանքային ծառայության զորակոչի անցկացման հարցերով զբաղվում են տեղական, մարզային (Երեւանի քաղաքային) եւ հանրապետական զորակոչային հանձնաժողովները: Դրանց ստեղծման եւ գործունեության կարգը սահմանվում է «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 7. Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին այլընտրանքային ծառայություն ընտրելիս, սույն օրենքի 4-րդ հոդվածում սահմանված ժամկետում, գրավոր դիմում է ներկայացնում իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ նշելով իր նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը եւ շարադրելով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու նպատակները:

Քաղաքացու դիմումը զինվորական կոմիսարիատում գրանցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, փոխանցվում է տեղական զորակոչային հանձնաժողովի քննարկմանը:

Հոդված 8. Այլընտրանքային ծառայության մասին դիմումը քննարկելը

Տեղական զորակոչային հանձնաժողովն այլընտրանքային ծառայության մասին դիմումը քննարկում է առանձին նիստում: Դիմողը հանձնաժողովի նիստի ժամանակի եւ վայրի մասին նախապես տեղեկացվում է: Զորակոչային հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի համար ընդունում է որոշում:

Հոդված 9. Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը մերժելու հիմքերը

Տեղական զորակոչային հանձնաժողովի որոշմամբ քաղաքացու դիմումը՝ պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին կարող է մերժվել, եթե այլընտրանքային ծառայության մասին՝

1) դիմում ներկայացրած քաղաքացին կրկին կանչվում է տեղական զորակոչային հանձնաժողովի նիստին եւ անհարգելի պատճառով չի ներկայանում.

2) դիմումում կան կեղծ տեղեկություններ:

Տեղական զորակոչային հանձնաժողովի կողմից քաղաքացու դիմումը մերժվելու դեպքում նրան 10 օրվա ընթացքում տրվում է տեղական զորակոչային հանձնաժողովի նիստի արձանագրությունից քաղվածք: Քաղվածքում նշվում է, թե